ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան 10.02.2023թ.

1. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2023 թվականի փետրվարի 10-ի արտահերթ նիստին.

ա) մասնակցում էին՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ

Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, Խորհրդի անդամ

Է.Հակոբյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Ն. Տերյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Լ.Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Է. Էլբակյան - ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ

Կ. Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ

Գ. Սահակյան - Խորհրդի քարտուղար

Ա. Կոտոյան – Տեսչական մարմնի ղեկավար

Ա. Մկրտչյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Ա. Սարգսյան - Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ

բ) բացակայում էր՝

Ա. Հարությունյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Արտահերթ նիստի օրակարգային հարցեր.

2. Օրակարգում ընդգրկված հարցերն են՝

ա) Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից 2022 թվականին իրականացված աշխատանքների ներկայացում:

Զեկուցող՝ Ա. Կոտոյյան

բ) Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. բյուջեում փոփոխություն կատարելուն:

Զեկուցող՝ Ա. Կոտոյյան

3. Քննարկվեց օրակարգի հարց՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից 2022 թվականին իրականացված աշխատանքների ներկայացում.

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից 2022 թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացրեց Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյյանը, որից հետո տեղի ունեցան ներկայացրած հաշվետվության վերաբերյալ մտքերի փոխանակություն, մասնավորապես Կարեն Չիլինգարյանին հետաքրքրեց թե ստուգումներով հայտնաբերված խախտումները ինչ կարգով են վերացվում և կա արդյոք պատասխանատվություն, ինչին տեսչական մարմնի ղեկավարը արձագանքեց և ասաց, որ բոլոր խախտում կատարող տնտեսավարողները ենթարկվում են վարչական պատասխանատվության և այն դեպքում, երբ խախտումը մինչև ստուգման ակտի կազմելու օրվա դրությամբ վերացված չեն լինում տրվում են համապատասխան ժամկետով կարգադրագրեր՝ մինչև խախտումների վերացումը: Կարեն Չիլինգարյանի հարցին, թե խախտումներ հայտնաբերելուց հետո կասեցվում է տնտեսավարողի գործունեությունը՝ Արմեն Կոտոյյանը հայտնեց, որ Տեսչական մարմնին կասեցման իրավասություն վերապահված չէ, բայց նաև առանց գործունեության կասեցման բավականին պակասել են ավտոմոբիլային բենզինի ոլորտում խախտումները, սակայն ինչը դեռ չի զգացվում դիզելային վառելիքի ոլորտում, մասնավորապես Սյունիքի մարզում: Վահան Քերոբյանի հարցին թե ինչ կարծիք է կազմում Կարեն Չիլինգարյանը Տեսչական մարմնի 2022 թվականի ընթացքում կատարված վերահսկողական աշխատանքների վերաբերյալ՝ վերջինիս կարծիքը դրական էր կատարված

ստուգումների մասով: Տեսչական մարմնի կողմից «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի դրույթների պահպանման նկատմամբ կատարված վերահսկողական աշխատանքները բարձր գնահատականի արժանացրեց Լենա Նանուշյանը:

Որոշվեց միաձայն՝ հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2022թ. տարեկան հաշվետվությանը:

4.Քննարկվեց օրակարգի հարց՝ հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. բյուջեում փոփոխություն կատարելուն.

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. բյուջեում փոփոխություն կատարելուն հավանություն տալու վերաբերյալ օրակարգային հարցը ներկայացրեց Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյյանը:

Քննարկման արդյունքում որոշվեց օրակարգային հարցին հավանություն տալ հեռակա քվեարկությամբ:

Որոշվեց միաձայն՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. բյուջեում փոփոխություն կատարելուն հավանություն տալ հեռակա քվեարկությամբ:

Խորհրդի նախագահ՝

_____ Վ.Քերոբյան

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան

ստորագրություն